ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունվարի 2026 թվականի թիվ 7–Ա

ՆԵԼԼԻ ՍԱՐԳՍԻ ՌԱՇՈՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԾԱՂԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 16-րդ հոդվածի 8-րդ մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 2039-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 529 նիստի արձանագրությունը, դրական եզրակացությունը և Նելլի Ռաշոյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Նելլի Սարգսի Ռաշոյանին 2026 թվականի հունվարի 9-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Վերին Ծաղկավանի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-01-09 12:10:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. հունվարի 9
ք.Իջևան